

Հատուկ կարծիք

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ԿԴ2/0139/02/19 քաղաքացիական գործով 08.07.2024 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

08.07.2024 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2024 թվականի հուլիսի 08-ին գրավոր ընթացակարգով քննելով Սերգեյ Ավագյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.10.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ Սերգեյ Ավագյանի հայցի ընդդեմ «Կոտայքի մարզ» նոտարական տարածքի նոտար Տաթև Ղուկասյանի (այսուհետ նաև՝ Նոտար), Կադաստրի կոմիտեի, Զոյա Հարությունյանի և երրորդ անձ Շողիկ Հարությունյանի՝ ժառանգության իրավունքի վկայագիրը, սեփականության իրավունքի գրանցումը մասնակիորեն անվավեր ճանաչելու, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու ու կտակն անվավեր ճանաչելու պահանջների մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը մերժել, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.10.2022 որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ նույն որոշման պատճառաբանություններով:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Գ. Հակոբյանս և Ն. Հովսեփյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական ու եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Վճռաբեկ դատարանը որպես գործի դատավարական նախապատմություն նշել է հետևյալը.

«Դիմելով դատարան՝ Սերգեյ Ավագյանը պահանջել է անվավեր ճանաչել Նոտարի կողմից Նինա Ավագյանի անվամբ 18.01.2018 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, մասնակիորեն՝ 1/2 մասով, անվավեր ճանաչել Նինա Ավագյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, իրեն ճանաչել Իվան Ավագյանի ժառանգությունն ընդունած ժառանգ՝ Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42-րդ շենքի թիվ 18 բնակարանի 1/2 մասի նկատմամբ, անվավեր ճանաչել Նինա Ավագյանի կողմից 20.12.2017 թվականին կազմված և Նոտարի կողմից վավերացված կտակը:

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 29.09.2021 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է «1.1. Սերգեյ Ավագյանին ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ հոր՝ Իվան Սիմոնի Ավագյանի՝ մահացած 11.03.2005 թվականին, ժառանգական գույքի՝ ՀՀ, Կոտայքի մարզի, Աբովյան քաղաքի, 3-րդ միկրոշրջանի, 42 շենք, 18 բնակարանի 1/4 բաժնեմասի նկատմամբ: 1.2 ՀՀ Կոտայք նոտարական տարածքի նոտար Տաթև Ղուկասյանի կողմից 18.01.2018 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ սեղանամատյանում գրանցված թիվ 221 համարի տակ, մասնակի, այն է՝ Նինա Ավագյանի ՀՀ Կոտայքի մարզի

Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42 շենքի թիվ 18 հասցեում գտնվող բնակարանի 1/4 մասի նկատմամբ Իվան Ավագյանի ժառանգ հանդիսանալու մասով, ճանաչել անվավեր: 1.3. Հայցը՝ Սերգեյ Ավագյանին հոր ժառանգական գույքի՝ ՀՀ, Կոտայքի մարզի, Աբովյան քաղաքի, 3-րդ միկրոշրջանի, 42 շենքի, 18 բնակարանի 1/4 բաժնեմասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ՀՀ Կոտայք նոտարական տարածքի նոտար Տաթև Ղուկասյանի կողմից 18.01.2018 թվականին տրված և սեղանամատյանում թիվ 221 համարի տակ գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի, այն է՝ Նինա Ավագյանի ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42 շենքի թիվ 18 բնակարանի 1/4 մասի նկատմամբ Իվան Ավագյանի ժառանգ հանդիսանալու մասով, անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու, Նինա Ավագյանի կողմից 20.12.2017 թվականին կազմված և սեղանամատյանում թիվ 6455 համարի տակ գրանցված կտակն անվավեր ճանաչելու պահանջների մասով, մերժել»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.10.2022 թվականի որոշմամբ Սերգեյ Ավագյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 29.09.2021 թվականի վճիռը բեկանվել է մասնակիորեն՝ որպես Դատարանի 29.09.2021 թվականի վճռով Կոտայքի նոտարական տարածքի նոտարի կողմից 18.01.2018 թվականին Նինա Ավագյանին տրված ժառանգության իրավունքի վկայագիրը 1/4 մասով անվավեր ճանաչելու հետևանք՝ 1/4 մասով անվավեր է ճանաչվել Նինա Ավագյանի կողմից 20.12.2017 թվականին կազմված կտակը և դրա հիման վրա՝ 1/4 մասով անվավեր է ճանաչել Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42-րդ շենքի թիվ 18 բնակարանի նկատմամբ իրականացված պետական գրանցումը. մնացած մասով Դատարանի 29.09.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սերգեյ Ավագյանը (ներկայացուցիչ Գայանե Զաքարյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Նոտարը»:

2. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի հիմքեր, հիմնավորումներ և պահանջ նշել է հետևյալը.

«Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ, 1211-րդ, 1225-րդ և 1228-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ ու 9-րդ հոդվածները, կիրառել է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել Արդարադատության նախարարի 14.08.2000 թվականի «ՀՀ պետական նոտարական գրասենյակների կողմից նոտարական գործողություններ կատարելու կարգի մասին հրահանգը հաստատելու մասին» թիվ 523 հրամանի 155-րդ և 209-րդ կետերը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապես և է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ թիվ 2-419 գործով Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 26.06.2007 թվականի վճռով հաստատվել է իր՝ հոր անվամբ գրանցված ավտոմեքենայի նկատմամբ ժառանգությունն ընդունած համարելու փաստը: Հետևաբար

ժառանգության մի մասն ընդունելով՝ ինքն արդեն ընդունել է հոր՝ Իվան Ավագյանի ամբողջ ժառանգությունը, որով ժառանգության ձևակերպման գործընթացն ավարտվել է: Արդյունքում՝ ժառանգության ամբողջ զանգվածը պատկանել է իրեն՝ անկախ դրա նկատմամբ սեփականության իրավունքի գրանցված լինելու կամ չլինելու հանգամանքից:

Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր է ճանաչվել մասնակիորեն՝ 1/4 մասով, չի անդրադարձել մնացած մասով այն անվավեր ճանաչման ենթակա չլինելու կապակցությամբ Դատարանի պատճառաբանությունների իրավաչափությանը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ մինչև Նինա Ավագյանի կողմից Իվան Ավագյանի ժառանգությունն ընդունելն ինքն արդեն ընդունել է այն, արդյունքում՝ քննարկման առարկա չդարձնելով այն հարցը, թե արդյո՞ք անհրաժեշտ էր իր համաձայնությունը՝ Նինա Ավագյանի կողմից Իվան Ավագյանի ժառանգությունն օրենքով սահմանված ժամկետից հետո ընդունելու համար:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել նաև իր կողմից բարձրացված այն հարցին, որ 21.12.2017 թվականի թիվ 862 տեղեկանքը վերաբերում է Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42-րդ շենքի թիվ 18 հասցեում գտնվող բնակարանին ընդհանրապես, մինչդեռ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը վերաբերում է գույքի 1/2 բաժնին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Նինա Ավագյանի խնդրանքով հրավիրվել է թարգմանիչ՝ հայերենին չտիրապետելու պատճառով, կտակը կտակարարի կողմից անձամբ չի կազմվել, այլ կտակարարի բառերից գրի է առել նոտարը, որը թարգմանվել է ռուսերեն: Այսինքն՝ կտակը շարադրված է եղել հայերեն՝ Նինա Ավագյանի համար անհասկանալի լեզվով: Հայերեն կազմված կտակը կտակարարի կողմից ընթերցվել չէր կարող, ուստի անհրաժեշտ էր հրավիրել վկա, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածում նշված «ի վիճակի չէ» արտահայտությունը վերաբերում է նաև հայերենին չտիրապետելու դեպքին: Տվյալ դեպքում թարգմանիչը չէր կարող փոխարինել վկային, քանի որ թարգմանիչն ընդամենը թարգմանել է իրեն տրամադրված տեքստը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ խնդրո առարկա կտակը գետեղված չէ մեկ թղթի վրա՝ կողք-կողքի, ինչից հնարավոր կլիներ հետևություն կատարել, որ Նինա Ավագյանը ծանոթացել է ռուսերեն գրված կտակի բովանդակությանը: Տվյալ դեպքում նաև հնարավոր չէ պարզել, թե արդյո՞ք թարգմանիչը ճիշտ է թարգմանել կտակը, քանի որ չկա դրա բնագիր տեքստը, իսկ թարգմանությունը կատարվել է բանավոր:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հայերենին չտիրապետելու պայմաններում ստացվում է, որ Նինա Ավագյանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով ի վիճակի չի եղել անձամբ կարդալ կտակը, ուստի վկայի ներկայությունը պարտադիր է եղել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն՝ Դատարանի 29.09.2021 թվականի վճիռն անփոփոխ թողնելու մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի 14.10.2022 թվականի որոշումն ու փոփոխել այն՝ 20.12.2017 թվականին կազմված և Նոտարի կողմից վավերացված կտակն անվավեր ճանաչելու պահանջի մասով հայցը բավարարել, կամ գործն այդ մասով ուղարկել նոր քննության»:

2.1. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումներ նշել է հետևյալը.

«Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ նոտարական գործողությունների մասնակիցն ինքն է որոշում թարգմանիչ ներգրավելու հարցը՝ գնահատելով իր կողմից հայերենին տիրապետելու հանգամանքն ու աստիճանը: Տվյալ

դեպքում նման նախաձեռնությամբ հանդես է եկել Նինա Ավագյանը, ինչից ենթադրվում է, որ վերջինս ցանկացել է հավաստիանալ, որ ի սկզբանե հայերեն կազմվող կտակի բովանդակությունն ամբողջությամբ արտահայտում է իր կամքը:

«Վաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ ֆիզիկական թերության, հիվանդության և անգրագիտության դեպքում կտակարարը զրկված է դրա բովանդակությունն ընկալելու հնարավորությունից, որն ապահովելու համար օրենսդիրը նախատեսել է վկայի պարտադիր ներկայության պահանջ: Մինչդեռ լեզվին չտիրապետելու կամ ոչ բավարար տիրապետելու դեպքերում առկա է թարգմանչի մասնակցության հնարավորություն, որից պահանջվում են որոշակի մասնագիտական որակներ ու պետության կողմից դրանց ճանաչում: Անգրագիտությունը և լեզվին չտիրապետելը նույն իրավիճակները չեն, քանի որ անձը կարող է չտիրապետել որևէ լեզվի՝ լինելով գրագետ:

Կտակը պետք է կազմվի հայերեն, այլ ոչ թե լինի այլ լեզվով գրված փաստաթղթի թարգմանությունը: Այն դեպքում, երբ կտակարարը լեզվի չիմացության կամ այլ պատճառով չի կարող անձամբ կազմել կտակը, դա անում է նոտարը՝ հայերեն, կտակարարի բառերով: Լեզվի գործոնով առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով օրենսդիրը նախատեսել է թարգմանիչ ներգրավելու հնարավորություն:

Սույն գործով Արդարադատության նախարարի 14.08.2000 թվականի «ՀՀ պետական նոտարական գրասենյակների կողմից նոտարական գործողություններ կատարելու կարգի մասին հրահանգը հաստատելու մասին» թիվ 523 հրամանը կիրառելի չէ, քանի որ հրամանն ուժը կորցրել է 11.10.2009 թվականին»:

3. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր նշել է հետևյալը.

«Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Իվան Ավագյանը և Նինա Խարբատովիչն ամուսնացել են 22.08.1973 թվականին, որի մասին քաղաքացիական կացության ակտերի գրանցման ամուսնության գրքում 22.08.1973 թվականին կատարվել է համապատասխան գրանցում: Ամուսնության գրանցումից հետո կինը կրել է Ավագյան ազգանունը (*հիմքեր՝ ամուսնության թիվ 1-ՇԽ 402942 վկայականի ռուսերենից թարգմանություններ*) (**հատոր 1-ին, գ.թ. 29, հատոր 4-րդ, գ.թ. 62**).

2) Սերգեյ Ավագյանը ծնվել է 20.02.1972 թվականին, վերջինիս հայրն է Իվան Ավագյանը, մայրը՝ Նինա Ավագյանը (*հիմք՝ 29.05.2019 թվականին տրված թիվ 6947886 ծննդյան վկայականի ռուսերենից թարգմանություններ*) (**հատոր 2-րդ, գ.թ. 36, հատոր 4-րդ, գ.թ. 63**).

3) 18.07.1997 թվականի թիվ 712 տեղեկանքի համաձայն՝ Աբովյանի քաղխորհրդի գործկոմը 29.06.1993 թվականի «ՀՀ պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի համաձայն «Հատիս» ԲՇԿ-ին պատկանող 3-րդ միկրոշրջանի 42-րդ շենքի թիվ 18 չորս սենյականոց կոոպերատիվ բնակարանը սեփականաշնորհվել է փայտեր Նինա Ավագյանի անունով: Վերջինս մուծել է բնակարանի ամբողջ արժեքը՝ 17.410 ռուբլի (**հատոր 1-ին, գ.թ. 24**).

4) 18.07.1997 թվականի թիվ 712 որոշման (տեղեկանքի) հիման վրա Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42-րդ շենքի թիվ 18 բնակարանի նկատմամբ գրանցվել է Նինա Ավագյանի սեփականության իրավունքը (*հիմք՝ սեփականության վկայագիր՝ գրանցման գիրք թիվ 8/5-563, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 21.10.2002 թվականի թիվ 894906 վկայական*) (**հատոր 1-ին, գ.թ. 19, 26-28**).

5) Իվան Ավագյանը մահացել է 11.03.2005 թվականին (*հիմք՝ մահվան թիվ 023133 վկայական*) (**հատոր 1-ին, գ.թ. 22**).

6) Թիվ 2-419 գործով Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 26.06.2007 թվականի վճռով հաստատվել է Սերգեյ Ավագյանի կողմից իր հոր՝ Իվան Ավագյանի անվամբ 1988 թվականի արտադրության «ՎԱԶ-210630» մակնիշի «43 LL 564» համարանիշով ավտոմեքենայի նկատմամբ ժառանգությունն ընդունելու փաստը (**հատոր 1-ին, գ.թ. 25**).

7) «Ճառագայթ» համատիրության նախագահի կողմից 21.12.2017 թվականին տրված թիվ 862 տեղեկանքի համաձայն՝ հանգուցյալ Իվան Ավագյանը (մահացած՝ 11.03.2005 թվականին) մինչև մահը մշտական հաշվառմամբ բնակվել է Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42-րդ շենքի թիվ 18 հասցեում: Հանգուցյալին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը՝ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42-րդ շենքի թիվ 18 հասցեում գտնվող բնակարանը, նրա մահից հետո՝ 11.03.2005 թվականից վեց ամսվա ընթացքում տիրապետում, օգտագործում և կառավարում, ինչպես նաև կոմունալ վճարները մինչև օրս վճարում է նրա կինը՝ Նինա Ավագյանը (**հատոր 1-ին, գ.թ. 81**).

8) 21.12.2017 թվականին Նոտարին ներկայացրած դիմումով Նինա Ավագյանը հայտնել է, որ Իվան Ավագյանի ժառանգությունը ցանկացած հիմքով ընդունել է և խնդրել է իրեն տալ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր (**հատոր 1-ին, գ.թ. 31**).

9) 18.01.2018 թվականին Նոտարին ներկայացրած դիմումով Նինա Ավագյանը խնդրել է հաստատել իր կողմից հանգուցյալ Իվան Ավագյանի (մահացած՝ 11.03.2005 թվականին) ժառանգությունն ընդունելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը, քանի որ Իվան Ավագյանի մահվանից հետո վեց ամսվա ընթացքում նրա ժառանգությունն ընդունելու դիմում նոտարին չի հանձնել, սակայն հանգուցյալի ժառանգական գույքը՝ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42-րդ շենքի թիվ 18 հասցեում գտնվող բնակարանը, փաստացի տիրապետել և կառավարել է (**հատոր 1-ին, գ.թ. 83**).

10) Նոտարի կողմից 18.01.2018 թվականին տրվել է «Ժառանգությունն ընդունելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու մասին» թիվ 02 նոտարական ակտը, որով հաստատվել է Նինա Ավագյանի կողմից իր ամուսնու՝ հանգուցյալ Իվան Ավագյանի ժառանգությունն ընդունելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը (**հատոր 1-ին, գ.թ. 82**).

11) Նոտարի կողմից 18.01.2018 թվականին տրվել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, որի համաձայն՝ Իվան Ավագյանի մահվանից հետո (մահացած՝ 11.03.2005 թվականին) նրան հասանելիք գույքի նկատմամբ ժառանգ է հանդիսանում կինը՝ Նինա Ավագյանը: Ժառանգական գույքը, որի համար տրված է վկայագիրը, բաղկացած է ժառանգության բացման օրն առկա՝ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42-րդ շենքի թիվ 18 հասցեում գտնվող բնակարանի 1/2 մասից (**հատոր 1-ին, գ.թ. 30**).

12) Նինա Ավագյանը 20.12.2017 թվականին կազմած կտակով արել է կարգադրություն հետևյալի մասին՝ «1. սեփականության իրավունքով ինձ պատկանող՝ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42 շենքի 18 հասցեում գտնվող բնակարանն ամբողջությամբ, կտակում եմ քաղաքացի Զոյա Միխայելի Հարությունյանին, ծնված՝ 09.01.1957 թվականին, այն դեպքի համար, եթե Զոյա Միխայելի Հարությունյանը, ծնված՝ 09.01.1957 թվականին մահանա մինչև ժառանգությունը բացվելը, հրաժարվի ժառանգությունից, որպես անարժան ժառանգ մեկուսացվի ժառանգությունից կամ չկատարի կտակարարի օրինաչափ պայմանները՝ ենթաժառանգ եմ նշանակում քաղաքացի Շողիկ Հարությունի Հարությունյանին, ծնված՝ 06.12.1982 թվականին (...), որի համար ստորագրել է: Կտակում նշվել է նաև, որ «Կտակարար՝ Նինա Վազլավովնա Ավագյանի հայերեն լեզվին

չտիրապետելու պատճառով, նրա խնդրանքով հրավիրել է թարգմանիչ: Թարգմանիչ՝ Վիոլետա Ալեքսանդրի Բաչատուրովա: (...) Սույն կտակի հայերենից ռուսերեն բանավոր թարգմանությունը կատարված է իմ՝ թարգմանիչ Վիոլետա Ալեքսանդրի Բաչատուրովայիս կողմից: Թարգմանությունը կատարված է ճիշտ, լրիվ և իմ կողմից», որի համար թարգմանիչը ստորագրել է: Կտակը վավերացվել է «Կոտայքի մարզ» նոտարական տարածքի նոտար Տաթև Ղուկասյանի կողմից (**հատոր 1-ին, գ.թ. 33**).

13) Նինա Ավագյանը մահացել է 04.04.2018 թվականին (*հիմք՝ մահվան թիվ 278377 վկայական*) (**հատոր 1-ին, գ.թ. 23**).

14) 10.04.2018 թվականին Նոտարին ներկայացրած դիմումով Սերգեյ Ավագյանը հայտնել է, որ Նինա Ավագյանի ժառանգությունը ցանկացած հիմքով ընդունում է և խնդրել է իրեն տալ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր (**հատոր 1-ին, գ.թ. 32**).

15) 18.04.2018 թվականին Նոտարին ներկայացրած դիմումով Ջոյա Հարությունյանը հայտնել է, որ ընդունում է Նինա Ավագյանի ըստ կտակի ժառանգությունը և խնդրել է իրեն տալ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր: Դիմումում նշվել է, որ ժառանգական գույքը բաղկացած է Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42-րդ շենքի թիվ 18 հասցեում գտնվող բնակարանից (**հատոր 3-րդ, գ.թ. 119**)»:

4. Վճռաբեկ դատարանը որպես պատճառաբանություններ և եզրահանգում նշել է հետևյալը.

«Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է եղել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկայությամբ:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ կտակարարի՝ հայերենին չտիրապետելու դեպքում կտակ կազմելու նույնպիսի գործողությանը վկայի պարտադիր ներկայությանը:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ժառանգաբար՝ կտակին կամ օրենքին համապատասխան, անցնում է այլ անձանց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կատարվում է ըստ կտակի և ըստ օրենքի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1192-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կտակ է համարվում քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի տնօրինման վերաբերյալ նրա կամքի արտահայտությունը:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ կտակը պետք է արվի անձամբ: (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1193-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին իրավունք ունի իր հայեցողությամբ ցանկացած գույք կտակել ցանկացած անձի, ցանկացած ձևով որոշել ժառանգությունում ժառանգների բաժինները, զրկել ժառանգությունից ըստ օրենքի ժառանգներին, կտակում ներառել ժառանգության մասին նույն օրենսգրքի

կանոններով նախատեսված այլ կարգադրություններ, վերացնել, փոփոխել կամ լրացնել կազմված կտակը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1199-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կտակարարն իրավունք ունի կազմել ցանկացած՝ ներառյալ ապագայում ձեռք բերվելիք գույքի վերաբերյալ կարգադրություն պարունակող կտակ:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ժառանգությունը բացվում է միայն այն գույքի նկատմամբ, որը ժառանգության բացման օրը պատկանել է կտակարարին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգությունը կատարվում է երկու հիմքով՝ ըստ կտակի և ըստ օրենքի: Ընդ որում, առաջնահերթության կարգով կատարվում է ժառանգություն ըստ կտակի, քանի որ կտակի միջոցով քաղաքացին իր հայեցողությամբ որոշում է ժառանգական զանգվածի մեջ մտնող իր գույքի ճակատագիրն իր մահից հետո: Իսկ ըստ օրենքի ժառանգությունը կատարվում է այն դեպքում, եթե չկա կտակ, կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը: Կտակն արտահայտում է քաղաքացու կամքն իր մահվան դեպքում իրեն պատկանող գույքի տնօրինման վերաբերյալ: Քաղաքացին կտակ կազմելիս ունի լայն հնարավորություններ: Մասնավորապես՝ քաղաքացին իրավունք ունի իր հայեցողությամբ ցանկացած գույք կտակել ցանկացած անձի, ցանկացած ձևով որոշել ժառանգությունում ժառանգների բաժինները: Կտակարարն իրավունք ունի կազմել ցանկացած՝ ներառյալ ապագայում ձեռք բերվելիք գույքի վերաբերյալ կարգադրություն պարունակող կտակ, սակայն ժառանգությունը բացվում է միայն այն գույքի նկատմամբ, որը ժառանգության բացման օրը պատկանել է կտակարարին (*տե՛ս Վարդգես Չափիկյանն ընդդեմ «Էրեբունի» նոտարական տարածքի նոտար Անահիտ Ղազարյանի և մյուսների թիվ ՎԴ/12802/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.09.2020 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ժառանգությունը ժառանգը ձեռք է բերում այն ընդունելու դեպքում: Որպես կամքի ինքնավարության սկզբունքի դրսևորում՝ ժառանգն ինքն է որոշում ընդունել ժառանգությունը, թե՛ ոչ: Ընդ որում, ժառանգությունը ձեռք բերելու իրավունքից օգտվելու դեպքում գործում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված այն նորմը, որի համաձայն՝ ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում: Նշված կարգավորումը բխում է այն հանգամանքից, որ ժառանգումն ընդհանուր, համապարփակ իրավահաջորդություն է, որի դեպքում ժառանգությունը ժառանգին անցնում է որպես մեկ միասնական ամբողջություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրեն պատկանող գույքի տնօրինման, այն է՝ իր մահից հետո դրա իրավական ճակատագրի վերաբերյալ կտակարարի կամքն արտաքին ձևով ճշգրիտ արտահայտելու, այսինքն՝ ներքին կամքի և արտաքին կամահայտնության համապատասխանությունն ապահովելու նպատակով օրենսդիրը նախատեսել է կտակը կազմելու ու այն նոտարական կարգով վավերացնելու որոշակի ընթացակարգ:

«Քաղաքացիական օրենսգրքի 1203-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կտակը պետք է կազմվի գրավոր՝ նշելով այն կազմելու վայրը և ժամանակը, անձամբ ստորագրվի կտակարարի և վավերացվի նոտարի կողմից:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի կանոնները չպահպանելը հանգեցնում է կտակի անվավերության:

«Քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կտակը վավերացնում է նոտարը նոտարիատի մասին օրենքով սահմանված կարգով:

«Քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նոտարի վավերացրած կտակը պետք է գրած լինի կտակարարը կամ կտակարարի բառերով գրի առնի նոտարը: Կտակը գրելիս կամ գրի առնելիս կարող են օգտագործվել տեխնիկական միջոցներ (համակարգիչ, գրամեքենա և այլն):

«Քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ կտակարարի բառերով՝ նոտարի գրի առած կտակը, մինչև դրա ստորագրելը, պետք է կտակարարն ամբողջությամբ կարդա նոտարի ներկայությամբ: Եթե կտակարարը **Ֆիզիկական թերությունների, հիվանդության կամ անգրագիտության պատճառով** ի վիճակի չէ անձամբ կարդալ կտակը, ապա նոտարը դրա տեքստը հրապարակում է վկայի ներկայությամբ, և այդ մասին նշում է կատարվում կտակում՝ ցույց տալով այն պատճառները, որոնց ուժով կտակարարը չի կարողացել անձամբ կարդալ կտակը:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ կտակը կազմելիս և նոտարի կողմից վավերացվելիս կտակարարի ցանկությամբ կարող է ներկա գտնվել վկա: Եթե կտակարարն ի վիճակի չէ անձամբ կարդալ կտակը, վկայի ներկայությունը պարտադիր է: (...):

«Նոտարիատի մասին» «Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նոտարն իրականացնում է հետևյալ նոտարական գործողությունները՝ վավերացնում է գործարքներ (պայմանագրեր, կտակներ, լիազորագրեր, համաձայնագրեր և այլն):

Մինչև 17.08.2023 թվականը գործած խմբագրությամբ «Նոտարիատի մասին» «Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոտարական գործողությունները կատարվում են գրական հայերենով: Վավերացման կամ հաստատման են ենթակա միայն գրական հայերենով կազմված փաստաթղթերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: (...): Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ (...) Եթե նոտարը և (կամ) կողմը **բավարար չափով ծանոթ չէ փաստաթղթի լեզվին**, ապա հրավիրվում է թարգմանիչ: (...):

Մինչև 17.08.2023 թվականը գործած խմբագրությամբ «Նոտարիատի մասին» «Օրենքի 39-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անձը, որը **չի տիրապետում հայերենին**, կարող է նոտարական գործողություններին մասնակցել թարգմանչի միջոցով(1)՝

«Նոտարիատի մասին» «Օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոտարական կարգով վավերացվող կամ հաստատվող փաստաթղթերն ստորագրվում են նոտարի ներկայությամբ: (...):

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ փաստաթուղթն ընթերցելուց անմիջապես հետո դա ստորագրում է յուրաքանչյուր կողմ: Վկաների ներկայությամբ կատարված գործարքն ստորագրում են վկաները, իսկ թարգմանչի մասնակցությամբ՝ նաև թարգմանիչը: Նոտարը գործարքն ստորագրում է նրանցից անմիջապես հետո:

¹ «Նոտարիատի մասին» «Օրենքի 39-րդ հոդվածի 7-րդ մասի գործող խմբագրության համաձայն՝ անձը, որը չի տիրապետում հայերենին, կարող է նոտարական գործողություններին մասնակցել թարգմանչի միջոցով: Եթե նոտարը տիրապետում է անձին հայտնի օտար լեզվին, ապա փաստաթուղթը բանավոր կարող է թարգմանվել նոտարի կողմից, եթե նոտարական գործողություններին մասնակցող անձը չի առարկում և չի ցանկանում մասնակցել իր թարգմանչի միջոցով, որի մասին նշում է կատարվում վավերացման մակագրությունում:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոտարական գործողությունների ժամանակ որպես թարգմանիչ կարող է հանդես գալ համապատասխան լեզվի տիրապետման մասին որակավորման վկայական ունեցող այն անձը, որին վստահում է նոտարը, բացառությամբ նույն օրենքով նախատեսված դեպքերի: (...):

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ թարգմանիչը պետք է նոտարին ու կողմերին մանրակրկիտ թարգմանի վավերացվող կամ հաստատվող փաստաթղթի բովանդակությունը և երաշխավորի, որ թարգմանությունը կատարված է ճիշտ, լրիվ և իր կողմից: Այդ մասին նոտարը կատարում է համապատասխան մակագրություն:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ թարգմանիչը քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր կատարած ոչ ճիշտ կամ ոչ լրիվ թարգմանությունների հետևանքով պատճառված վնասի համար:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոտարական գործողությունների ժամանակ վկայի ներկայությունը պարտադիր է միայն օրենքով նախատեսված դեպքերում: Կողմերի առաջարկով նոտարը նոտարական գործողություններն իրականացնում է վկայի (վկաների) մասնակցությամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վկան պետք է ներկա լինի նոտարի կողմից նոտարական վավերացման ենթակա փաստաթղթի ընթերցման, փաստաթղթի ստորագրման և նոտարի կողմից դրա վավերացման ժամանակ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կտակը պետք է կազմված լինի, այդ թվում՝ գրի առնվի անձամբ կտակարարի կողմից կամ վերջինիս բառերով այն գրի առնի նոտարը (երկու դեպքում էլ տեխնիկական միջոցների գործադրումը թույլատրված է): Կտակարարը պետք է ստորագրի իր կողմից գրի առնված կտակը, իսկ եթե այն իր բառերով գրի է առել նոտարը, ապա նախքան ստորագրելը նոտարի ներկայությամբ պետք է կարդա այն: Կտակարարի կողմից իր բառերով, սակայն նոտարի գրի առած կտակը կարդալն ընթացակարգային տեսանկյունից կարևորվում է այնքանով, որ ծառայում է որպես կտակարարի իրական կամքի և դրա իրականացման հիմնական երաշխիք, քանի որ կտակի բովանդակությունն անձամբ վերարտադրելու միջոցով կտակարարն ընկալում է այն՝ ստուգելով նաև դրա համապատասխանությունն իր իրական կամքին:

Վերը նշված իրավիճակում օրենքը չի նախատեսում նոտարական գործողությանը վկայի ներկայության պարտադիր պահանջ, բայց կտակարարի մոտ համապատասխան ցանկության դեպքում կարող է ներկա գտնվել վկա: Կտակը վավերացնելու նոտարական գործողությանը վկայի ներկայությունը պարտադիր է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված այն դեպքերում, երբ **Ֆիզիկական թերությունների, հիվանդության կամ անգրագիտության** պատճառով կտակարարն ի վիճակի չէ անձամբ կարդալ կտակը: Հաշվի առնելով, որ ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններով պայմանավորված կտակարարը զրկված է կտակն անձամբ կարդալու, հետևաբար նաև դրա բովանդակությունն ընկալելու հնարավորությունից՝ վերջինիս ներքին կամքի ու արտաքին կամահայտնության համապատասխանությունն ապահովելու նպատակով օրենսդիրը սահմանել է վկայի ներկայության պարտադիր պահանջ: Ֆիզիկական թերությունները և հիվանդությունը կտակարարի առողջության (կարողունակության) հետ կապված հանգամանքներ են, երբ կտակարարի ֆիզիկական կամ մտավոր վիճակը սահմանափակում են կտակն ընթերցելու ընդունակությունը, մինչդեռ անգրագիտությունը կապված է վերջինիս գրաճանաչության հետ, երբ քերականական կամ լեզվական-ոճային ոչ բավարար մակարդակի, տարրական գիտելիքների բացակայության պատճառով կտակարարն ունակ չէ առհասարակ ընթերցել կտակը: Այս դեպքերում կտակի տեքստը հրապարակում է նոտարը՝ վկայի ներկայությամբ, իսկ կտակում նշում է կատարվում այն պատճառների մասին, որոնց

ուժով կտակարարը չի կարողացել անձամբ կարդալ կտակը: Կտակը ստորագրում է վկան, իսկ նրանից անմիջապես հետո՝ նոտարը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կտակարարի՝ հայերենին չտիրապետելը կամ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով՝ փաստաթղթի լեզվին կողմի բավարար չափով ծանոթ չլինելը չի նույնանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված անգրագիտության դեպքի հետ, քանի որ վերջին դեպքում կտակարարի կողմից կտակն ընթերցելու անհնարինությունը նրա գրաճանաչության ցածր մակարդակի հետևանք է, իսկ մյուս դեպքը պայմանավորված է **կոնկրետ լեզվի** չիմացության կամ գործածության համար անհրաժեշտ գիտելիքների անբավարարության հետ:

Օրենքով այլ բան նախատեսված չլինելու պայմաններում վավերացման են ենթակա գրական հայերենով կազմված փաստաթղթերը, իսկ կտակարարի՝ **փաստաթղթի լեզվին բավարար չափով ծանոթ չլինելու** դեպքում օրենսդիրը նախատեսել է կտակը վավերացնելու գործողությանը թարգմանչի մասնակցության հնարավորություն, որի ընթացքում վերջինս նոտարին և կողմերին մանրամասն թարգմանում է վավերացվող փաստաթղթի բովանդակությունը՝ երաշխավորելով, որ թարգմանությունը կատարված է իր կողմից, ճիշտ ու լրիվ, որի մասին նոտարը մակագրություն է կատարում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ի տարբերություն անգրագիտության դեպքի՝ կտակարարի՝ **փաստաթղթի լեզվին բավարար չափով ծանոթ չլինելու** (հայերենին չտիրապետելու) դեպքում օրենքը չի նախատեսում նոտարի կողմից կտակը վավերացնելու գործողությանը վկայի ներկայության պարտադիր պահանջ՝ չսահմանափակելով կողմերի ցանկությամբ վկայի մասնակցության հնարավորությունը: Նշված դեպքերում կտակարարի ներքին կամքն արտաքին ձևով ճշգրիտ արտահայտելու նպատակով օրենսդիրը թույլատրել է նոտարական գործողությանը մասնակից դարձնել համապատասխան լեզվի տիրապետման մասին որակավորման վկայական ունեցող անձի՝ թարգմանչի: Թարգմանչի մասնակցության դեպքերում վերջինս թե՛ նոտարին և թե՛ կտակարարին հանգամանակից թարգմանում է կտակի բովանդակությունը, հավաստում դրա ճիշտ ու լրիվ լինելը՝ այդպիսին չհանդիսացող թարգմանության հետևանքով պատճառված վնասի համար կրելով օրենքով սահմանված գույքային պատասխանատվություն:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ նախադասությունում նշված «**ի վիճակի չէ անձամբ կարդալ**» եզրույթը նույնպես պետք է մեկնաբանել որպես անձի կարողություն (վիճակ), քանի որ օրենսդրի լեզուն պարզ է այն իմաստով, որ **փաստաթղթի լեզվին բավարար չափով ծանոթ չլինելու և ի վիճակի չէ կարդալու** դեպքերի համար նախատեսվել են տարբեր հետևանքներ, մի դեպքում՝ թարգմանչի մասնակցություն, մյուս դեպքում՝ վկայի ներկայություն:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ

Սույն գործով դիմելով դատարան՝ Սերգեյ Ավագյանը պահանջել է անվավեր ճանաչել Նոտարի կողմից Նինա Ավագյանի անվամբ 18.01.2018 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, մասնակիորեն՝ 1/2 մասով, անվավեր ճանաչել Նինա Ավագյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, իրեն ճանաչել Իվան Ավագյանի ժառանգությունն ընդունած ժառանգ՝ Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42-րդ շենքի թիվ 18 բնակարանի 1/2 մասի նկատմամբ, անվավեր ճանաչել Նինա Ավագյանի կողմից 20.12.2017 թվականին կազմված և Նոտարի կողմից վավերացված կտակը:

Դատարանը, 29.09.2021 թվականի վճռում անդրադառնալով Սերգեյ Ավագյանի կողմից հոր՝ Իվան Ավագյանի ժառանգությունն ընդունված լինելու հարցին, արձանագրել է հետևյալը. «(...) Սերգեյ Ավագյանն ընդունել է Իվան Ավագյանի ժառանգության մի մասը՝ 1988թ. արտադրության ՎԱԶ-210630 մակնիշի 43 LL 564 պեդիամարանիշի (շարժիչ թիվ 0493891, թափքը՝ 2096652, գույքը՝ սաֆարի) ավտոմեքենայի նկատմամբ ժառանգությունը: Հետևաբար, դատարանը գտնում է, որ Սերգեյ Ավագյանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ կետի ուժով ընդունել է նաև ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42 շենքի թիվ 18 բնակարանի Իվան Ավագյանի 1/2 բաժնեմասի 1/2 մասի ժառանգությունը: (...) Այսպիսով, վերոգրյալի հիման վրա, դատարանը հաստատված է համարում Իվան Ավագյանի ժառանգությունը բացի իր կնոջ Նինա Ավագյանի կողմից, այլ նաև իր որդի՝ Սերգեյ Ավագյանի կողմից ընդունված լինելու փաստը»:

Հիմք ընդունելով Սերգեյ Ավագյանի՝ Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42-րդ շենքի թիվ 18 բնակարանի 1/4 մասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ հանդիսանալու հանգամանքը՝ ժառանգության իրավունքի վկայագիրը, սեփականության իրավունքի պետական գրանցումը և կտակն անվավեր ճանաչելու պահանջների վերաբերյալ Դատարանն արձանագրել է հետևյալը՝

- «(...) Պետք է ՀՀ Կոտայք նոտարական տարածքի նոտար Տաթև Ղուկասյանի կողմից 18.01.2018 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ սեղանամատյանում գրանցված թիվ 221 համարի տակ, մասնակի, այն է՝ Նինա Ավագյանի ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42 շենքի թիվ 18 հասցեում գտնվող բնակարանի 1/4 մասի նկատմամբ Իվան Ավագյանի ժառանգ հանդիսանալու մասով, ճանաչել անվավեր»,
- «(...) գործով չի հաստատվում ՀՀ Կոտայք նոտարական տարածքի նոտար Տաթև Ղուկասյանի կողմից 18.01.2018 թվականին Նինա Ավագյանի անվամբ տրված ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա Նինա Ավագյանի սեփականության իրավունքը ՀՀ, Կոտայքի մարզի, քաղաք Աբովյան, 3-րդ միկրոշրջան, 42 շենք, 18 բնակարանի նկատմամբ գրանցված լինելու փաստը: Հետևաբար, դատարանը գտնում է, որ Սերգեյ Ավագյանի հայցը՝ սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասով, ենթակա է մերժման»,
- «(...) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան՝ Նինա Ավագյանի կրակը գրի է առնվել նրա բառերով նոտարի կողմից համակարգչի կիրառմամբ, Նինա Ավագյանի կրակը կազմվել է հայերեն լեզվով, կրակը կազմելիս ներկա է գտնվել թարգմանիչ Վիոլետա Ալեքսանդրի Խաչատուրովան, կրակը թարգմանվել է Նինա Ավագյանի համար թարգմանիչ Վիոլետա Ալեքսանդրի Խաչատուրովայի կողմից: Հետևաբար, Նինա Վաղլավովնա Ավագյանի կողմից 20.12.2017 թվականին կազմված կրակով պահպանվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված օրենսդրի պահանջը: Դատարանն արձանագրում է նաև, որ Նինա Վաղլավովնա Ավագյանի կողմից 20.12.2017 թվականին կազմված կրակում նշվել է, որ Նինա Վաղլավովնա Ավագյանը չի տիրապետում հայերենին, հետևաբար, սույն գործով առկա չէ օրենսդրի կողմից սահմանված կրակը կազմելիս և նոտարի կողմից վավերացնելիս վկայի պարտադիր մասնակցության նախապայմանը: «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 6-րդ մասի, 7-րդ մասի պահանջներին համապատասխան՝

Նինա Ավագյանի կրակը կազմվել է հայերեն լեզվով, սակայն հաշվի առնելով, որ Նինա Վաղլավովնա Ավագյանը չի տիրապետել հայերենին կրակը կազմելիս և վավերացնելիս ներկա է գտնվել թարգմանիչ Վիդեա Ալեքսանդրի Խաչատրովան, որը կատարել է հայերենից ռուսերեն թարգմանությունը: Հետևաբար, Նինա Վաղլավովնա Ավագյանի կողմից 20.12.2017 թվականին կազմված կրակով պահպանվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված օրենսդրի պահանջը: Այսպիսով, դատարանը գտնում է, որ սույն գործով չի հաստատվում կրակը օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ կազմված լինելու փաստը:

Անդրադառնալով, հայցվորի այն պատճառաբանությանը, որ հայցվորի հոր ժառանգության իրավունքի վկայագիրը 1/2 մասով անվավեր ճանաչելու արդյունքում այդ մասով կրակը ևս ենթակա է անվավեր ճանաչման, դատարանը հարկ է համարում նշել, որ այն հանգամանքը, թե կրակը կազմելու պահին կրակարարը հանդիսացել է արդյոք կրակում նշված ամբողջ գույքի սեփականատեր, թե ոչ, կրակն այդ հիմքով անվավեր ճանաչելու հիմք հանդիսանալ չի կարող, քանի որ կրակում կարող է նշվել ինչպես այն գույքը, որը փվյալ պահին հանդիսացել է կրակարարի սեփականությունը, այնպես էլ գույք, որը կրակը կազմելու պահին նրա սեփականությունը չի հանդիսացել: Ժառանգատուի մահվան օրվա դրությամբ հանդիսացել է արդյոք վեճի առարկա ամբողջ բնակարանը նրա սեփականությունը, թե ոչ, որոշվում է այդ գույքի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագիր ստանալիս»:

Շարադրված պատճառաբանություններով Դատարանի 29.09.2021 թվականի վճռով Սերգեյ Ավագյանը ճանաչվել է հոր՝ Իվան Ավագյանի ժառանգությունն ընդունած ժառանգ՝ Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42-րդ շենքի թիվ 18 բնակարանի 1/4 մասի նկատմամբ, Նոտարի կողմից 18.01.2018 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակիորեն՝ Նինա Ավագյանի՝ վերը նշված բնակարանի 1/4 մասի նկատմամբ Իվան Ավագյանի ժառանգ հանդիսանալու մասով, ճանաչվել է անվավեր, իսկ մնացած մասով հայցը մերժվել է:

Վերաքննիչ դատարանը, 14.10.2022 թվականի որոշմամբ արձանագրելով, որ «Կոտայքի մարզ, ք.Աբովյան, 3-րդ միկրոշրջան, 42 շենքի թիվ 18 բնակարանը ձեռք է բերվել Իվան և Նինա Ավագյանների համատեղ ամուսնական կյանքի ընթացքում, հետևաբար, ժառանգատու Իվան Ավագյանի ժառանգության բացման օրը՝ 11.03.2005 թվականին, բնակարանը ամուսիններին պարկանել է ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով, որտեղ բաժինները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով համարվում են հավասար: Արձանագրելով, որ ժառանգության բացման օրը ժառանգատու Ի.Ավագյանին պարկանող ժառանգական զանգվածը բաղկացած է եղել Կոտայքի մարզ, ք.Աբովյան, 3-րդ միկրոշրջան, 42 շենքի թիվ 18 բնակարանի 1/2 բաժնեմասից և փվյալ հիմնավորմամբ անվավեր ճանաչելով 18.01.2018թ. ըստ օրենքի ժառանգության թիվ 221 իրավունքի վկայագիրը 1/4 մասով», գտել է, որ «անհիմն կերպով Դատարանը չի կիրառել անվավերության հետևանքներ՝ մերժելով անվավերության հետևանքից բխող հայցվորի մյուս պահանջները»՝ եզրակացրել է, որ «(...) 18.01.2018թ. ըստ օրենքի ժառանգության թիվ 221 իրավունքի վկայագիրը 1/4 մասով անվավեր ճանաչելու պարագայում հարկ էր 1/4 մասով անվավեր ճանաչել Ն.Ավագյանի կողմից կազմված կրակը և այդ մասով սեփականության իրավունքի պետական գրանցումը: Մասնավորապես, հարկ էր 1/4 մասով անվավեր ճանաչել Ն.Ավագյանի կողմից 20.12.2017թ. կազմված կրակը և այդ կրակի հիման վրա վիճելի բնակարանի 1/4 մասի նկատմամբ կատարված իրավունքի պետական գրանցումը»:

Անդրադառնալով կտակն օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ կազմված լինելու մասին բողոք բերած անձի փաստարկին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «*առկա չէ կրակը կազմելիս և նոտարի կողմից վավերացնելիս վկայի պարտադիր մասնակցության նախապայմանը*», քանի որ «*Նինա Ավագյանի կրակը կազմվել է հայերեն լեզվով, գրի է առնվել նրա բառերով նոտարի կողմից համակարգչի կիրառմամբ, կրակը կազմելիս ներկա է գտնվել թարգմանիչ Վիոլետա Խաչատուրովան, կրակի հայերենից ռուսերեն թարգմանությունը կատարվել է Նինա Ավագյանի համար թարգմանչի կողմից, հեղուկաբար, Ն.Ավագյանի կողմից 20.12.2017թ. կրակը կազմելիս պահպանվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 2-րդ մասի և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի իրավադրույթները*»:

Արդյունքում Սերգեյ Ավագյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի վճիռը մասնակիորեն բեկանվել է, և որպես ժառանգության իրավունքի վկայագիրը 1/4 մասով անվավեր ճանաչելու հետևանք՝ 1/4 մասով անվավեր է ճանաչվել Նինա Ավագյանի կողմից 20.12.2017 թվականին կազմված կտակը ու Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42-րդ շենքի թիվ 18 բնակարանի նկատմամբ իրականացված պետական գրանցումը:

Սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք հիմնավորված են հետևյալ պատճառաբանությամբ:

Տվյալ դեպքում Նինա Ավագյանի՝ հայերենին չտիրապետելու պայմաններում 20.12.2017 թվականին կտակ կազմելու և Նոտարի կողմից վավերացնելու գործողությանը **կտակարարի նախաձեռնությամբ** հրավիրվել է թարգմանիչ՝ Վիոլետա Խաչատուրովան, ով հայերեն կազմված կտակի բովանդակությունը բանավոր թարգմանել է ռուսերենի՝ կտակում արված իր ստորագրությամբ հավաստելով մակագրությունն այն մասին, որ «Սույն կտակի հայերենից ռուսերեն բանավոր թարգմանությունը կատարված է իմ՝ թարգմանիչ Վիոլետա Ալեքսանդրի Խաչատուրովայի կողմից: Թարգմանությունը կատարված է ճիշտ, լրիվ և իմ կողմից»: Այս դեպքում վկայի ներկայության պարտադիր պահանջ օրենքով նախատեսված չլինելու պայմաններում սեփական առաջարկով վկա հրավիրելու հնարավորությունից չի օգտվել նաև կտակարար Նինա Ավագյանը՝ իր կամքը դրա արտաքին արտահայտմանը համապատասխանեցնելու նպատակով նախաձեռնելով միայն կտակը վավերացնելու նոտարական գործողությանը թարգմանչի մասնակցություն:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավորված է 20.12.2017 թվականին կտակ կազմելու և Նոտարի կողմից վավերացնելու գործողության ընթացքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ու «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի՝ սույն որոշմամբ արձանագրված պահանջները պահպանված լինելու մասին ստորադաս դատարանների եզրահանգումը:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկին, որ ռուսերեն կտակն առկա չլինելու, իսկ թարգմանությունը բանավոր արված լինելու պայմաններում հնարավոր չէ պարզել Վիոլետա Խաչատուրովայի կողմից դրա բովանդակությունը ճշգրիտ թարգմանված լինելու հանգամանքը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թարգմանության լրիվ, ճիշտ և անձամբ կատարված լինելու մասին թարգմանիչ Վիոլետա Խաչատուրովան նշում է արել կտակում, որի համար ստորագրել է՝ թարգմանության լրիվության ու ճիշտ լինելու համար կրելով օրենսդրությամբ սահմանված կարգով գույքային պատասխանատվություն:

Բացի այդ, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նոտարը նոտարական գործողություններ իրականացնում է փաստաթղթեր վավերացնելու կամ վավերացված փաստաթղթեր տրամադրելու կամ օրենքով նախատեսված այլ

գործողություններ կատարելու միջոցով: Նոտարը, վավերացնելով փաստաթուղթը, հաստատում է դրա օրինականությունը և հավաստում փաստաթղթի լիարժեք ապացուցողական ուժը: (...):

Տվյալ դեպքում կտակը վավերացվել է Նոտարի կողմից, որի վրա առկա է թարգմանչի վերը մեջբերված նշումն ու ստորագրությունը (տես նաև՝ փաստ 12), հետևաբար օրենքի ուժով գործում է փաստաթղթի օրինականության և լիարժեք ապացուցողական ուժ ունենալու կանխավարկածը: Բողոք բերած անձը, բացի նշված փաստարկումը կատարելուց, որևէ ապացույց չի վկայակոչում, որի ուժով կապացուցվեր հակառակը, ուստի բողոք բերած անձի փաստարկը չի կարող բավարար հիմք հանդիսանալ հակառակ եզրահանգում կատարելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 4-րդ կետը չկիրառելու փաստարկի մասով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ սույն գործի փաստերը վերաբերում են կտակարարի բառերով նոտարի կողմից գրի առնված կտակին, որպիսի հարաբերությունները կարգավորված են նույն հոդվածի 3-րդ կետով, ուստի 4-րդ կետը սույն գործի նկատմամբ կիրառելի նորմ չի կարող համարվել: Բացի այդ, ինչպես վերը նշվեց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ նախադասությունում նշված **«ի վիճակի չէ անձամբ կարդալ»** եզրույթը նույնպես պետք է մեկնաբանել որպես անձի կարողություն (վիճակ), քանի որ օրենսդրի լեզուն պարզ է այն իմաստով, որ **փաստաթղթի լեզվին բավարար չափով ծանոթ չլինելու և ի վիճակի չէ կարդալու** դեպքերի համար նախատեսվել են տարբեր հետևանքներ, մի դեպքում՝ թարգմանչի մասնակցություն, մյուս դեպքում՝ վկայի ներկայություն:

Անդրադառնալով վճռաբեկ բողոքում նշված մյուս հիմքերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք նույնպես հիմնավորված չեն՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42-րդ շենքի թիվ 18 բնակարանն Իվան և Նինա Ավագյանները ձեռք են բերել ամուսնության ընթացքում (տե՛ս փաստ 4), հետևաբար այն հանդիսացել է նրանց համատեղ սեփականությունը: Իվան Ավագյանը մահացել է 11.03.2005 թվականին, որպիսի պահին նրա ժառանգական զանգվածում ներառվել է նաև նշված բնակարանի՝ իրեն պատկանած 1/2 բաժինը: Գործում առկա «Ճառագայթ» համատիրության նախագահի կողմից 21.12.2017 թվականին տրված թիվ 862 տեղեկանքով հաստատվել է, որ Նինա Ավագյանն ամուսնու՝ Իվան Ավագյանի մահվանից հետո վեցամսյա ժամկետում փաստացի տիրապետման հիմքով ընդունել է նրա ժառանգությունը, որպիսի իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հետագայում հաստատվել է նաև Նոտարի կողմից (տե՛ս փաստ 10), ու տրվել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր (տե՛ս փաստ 11):

Թիվ 2-419 գործով Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 26.06.2007 թվականի վճռի հիման վրա Իվան Ավագյանի անվամբ 1988 թվականի արտադրության «ՎԱԶ-210630» մակնիշի «43 LL 564» համարանիշով ավտոմեքենայի նկատմամբ ժառանգությունն ընդունելու պայմաններում Սերգեյ Ավագյանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով ընդունել է ժառանգատուի ամբողջ ժառանգությունը, ներառյալ՝ խնդրո առարկա բնակարանի իրեն հասանելիք բաժինը, որպիսի իրավաչափ հետևության հանգել են նաև ստորադաս դատարանները:

Նշվածից հետևում է, որ Իվան Ավագյանի ժառանգությունն ընդունել են նրա առաջին հերթի ժառանգները՝ կինը՝ Նինա Ավագյանը, և որդին՝ Սերգեյ Ավագյանը՝ հավասար բաժիններով, հետևաբար բողոք բերած անձի այն փաստարկները, որ հանգուցյալ Իվան Ավագյանին պատկանած ավտոմեքենայի նկատմամբ ժառանգությունն իր կողմից ընդունված լինելու պայմաններում այդ գործընթացն ավարտվել է, ժառանգական ամբողջ զանգվածը

պատկանել է իրեն, որպիսի հանգամանքի անտեսմամբ Վերաքննիչ դատարանը չի քննարկել Նինա Ավագյանի կողմից ժառանգությունն օրենքով սահմանված ժամկետից հետո ընդունելու համար իր համաձայնության անհրաժեշտության հարցը, հիմնավորված չեն՝ միաժամանակ նաև այն պատճառաբանությամբ, որ օրենքով չի պահանջվում ժառանգի կողմից ժառանգությունն ընդունելու դեպքում մյուս ժառանգի համաձայնությունը:

Շարադրված պատճառաբանությունների հիման վրա Դատարանն արձանագրել, իսկ Վերաքննիչ դատարանը վերահաստատել է, որ Սերգեյ Ավագյանը, որպես Իվան Ավագյանի ժառանգություն, ընդունել է նաև Կոտայքի մարզի Արվյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 42-րդ շենքի թիվ 18 բնակարանի 1/4 բաժինը (հանգուցյալին պատկանած 1/2 բաժնի կեսը), իսկ բնակարանի 3/4 բաժինը պատկանել է Նինա Ավագյանին, ինչի հաշվառմամբ հայցը բավարարվել է մասնակիորեն՝ բնակարանի 1/4 բաժնին վերաբերող մասով:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հիմնավորվում են վերը նշված պատճառաբանություններով:

Հիմք ընդունելով շարադրվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների մասին բողոք բերած անձի ներկայացրած փաստարկները հիմնավորված չեն, որպիսի պայմաններում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասով Վճռաբեկ դատարանին վերապահված լիազորությունը, այն է՝ Սերգեյ Ավագյանի վճռաբեկ բողոքը մերժել և օրինական ուժի մեջ թողնել Վերաքննիչ դատարանի 14.10.2022 թվականի որոշումը՝ սույն որոշման պատճառաբանություններով»:

Վճռաբեկ դատարանի դատավորներ Գ. Հակոբյանս և Ն. Հովսեփյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական ու եզրափակիչ մասերում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից արտահայտված կարծիքի հետ, շարադրում ենք մեր հափուկ կարծիքը դրանց վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ բողոքի քննության արդյունքներով կայացված Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշվում են հիմքերը, որոնցով դրվել է դատական ակտի օրինականությունն ստուգելու հարցը:

Նույն հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ բողոքի քննության արդյունքներով կայացված Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշվում են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ նույն օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից առնվազն մեկի առկայության հիմնավորումը:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկայությամբ:

Բողոքի քննության արդյունքում Վճռաբեկ դատարանը, *անհրաժեշտ համարելով անդրադառնալ կրակարարի՝ հայերենին չտիրապետելու դեպքում կրակ կազմելու նորարական գործողությանը վկայի պարտադիր ներկայությանը*, իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ **«ի տարբերություն անգրագիտության դեպքի՝ կրակարարի՝**

փաստաթղթի լեզվին բավարար չափով ծանոթ չլինելու (հայերենին չփիրապետելու) դեպքում օրենքը չի նախատեսում նոտարի կողմից կտակը վավերացնելու գործողությանը վկայի ներկայության պարտադիր պահանջ՝ չսահմանափակելով կողմերի ցանկությամբ վկայի մասնակցության հնարավորությունը»:

Արդյունքում Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների մասին բողոք բերած անձի ներկայացրած փաստարկները հիմնավորված չեն, կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասով Վճռաբեկ դատարանին վերապահված լիազորությունը, և Սերգեյ Ավագյանի վճռաբեկ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Վերաքննիչ դատարանի 14.10.2022 թվականի որոշումը:

Հայտնում ենք Վճռաբեկ դատարանի վերը նշված դիրքորոշման վերաբերյալ մեր անհամաձայնությունը՝ այն հիմնավորելով ստորև նշված պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1203-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կտակը պետք է կազմվի գրավոր՝ նշելով այն կազմելու վայրը և ժամանակը, անձամբ ստորագրվի կտակարարի և վավերացվի նոտարի կողմից:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի կանոնները չպահպանելը հանգեցնում է կտակի անվավերության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կտակը վավերացնում է նոտարը նոտարիատի մասին օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նոտարի վավերացրած կտակը պետք է գրած լինի կտակարարը կամ կտակարարի բառերով գրի առնի նոտարը: Կտակը գրելիս կամ գրի առնելիս կարող են օգտագործվել տեխնիկական միջոցներ (համակարգիչ, գրամեքենա և այլն):

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ կտակարարի բառերով՝ նոտարի գրի առած կտակը, մինչև դրա ստորագրելը, պետք է կտակարարն ամբողջությամբ կարդա նոտարի ներկայությամբ:

Եթե կտակարարը ֆիզիկական թերությունների, հիվանդության կամ անգրագիտության պատճառով ի վիճակի չէ անձամբ կարդալ կտակը, ապա նոտարը դրա տեքստը հրապարակում է վկայի ներկայությամբ, և այդ մասին նշում է կատարվում կտակում՝ ցույց տալով այն պատճառները, որոնց ուժով կտակարարը չի կարողացել անձամբ կարդալ կտակը:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ կտակը կազմելիս և նոտարի կողմից վավերացվելիս կտակարարի ցանկությամբ կարող է ներկա գտնվել վկա: Եթե կտակարարն ի վիճակի չէ անձամբ կարդալ կտակը, վկայի ներկայությունը պարտադիր է:

Եթե կտակը կազմվում և վավերացվում է վկայի ներկայությամբ, ապա այն պետք է ստորագրի վկան: Կտակում պետք է նշվեն վկայի անունն ու նրա բնակության վայրը:

Վերը նշված նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ կտակը պետք է կազմվի գրավոր՝ այն կազմելու վայրի և ժամանակի նշմամբ, անձամբ ստորագրվի կտակարարի և վավերացվի նոտարի կողմից, որպիսի կանոնները չպահպանելը հանգեցնում է կտակի անվավերության:

Կտակը վավերացնում է նոտարը «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, նոտարի վավերացրած կտակը պետք է գրած լինի կտակարարը կամ կտակարարի բառերով գրի առնի նոտարը: Եթե կտակը գրի է առնում նոտարը՝ կտակարարի բառերով, ապա մինչև այն ստորագրելը կտակարարը նոտարի ներկայությամբ պետք է այն ամբողջությամբ կարդա:

Միևնույն ժամանակ օրենսդիրը համապատասխան իրավակարգավորումներ է նախատեսել այն դեպքերի համար, երբ վկայի ներկայությունը վերը նշված նոտարական գործողությանը պարտադիր է: Այդպիսի դեպքեր են՝

1. կտակարարի՝ ֆիզիկական թերությունների, հիվանդության կամ անգրագիտության պատճառով անձամբ կտակը կարդալ ի վիճակի չլինելը, որի դեպքում նոտարը դրա տեքստը պետք է հրապարակի վկայի ներկայությամբ՝ այդ մասին նշում կատարելով կտակում և ցույց տալով այն պատճառները, որոնց ուժով կտակարարը չի կարողացել անձամբ կարդալ կտակը.

2. կտակարարի ցանկությունը վերը նշված նոտարական գործողությանը մասնակից դարձնելու նոտարին.

3. կտակարարի՝ ի վիճակի չլինելն անձամբ կարդալ կտակը:

Ընդ որում, վերջին դեպքը չի կարող պայմանավորված լինել կտակարարի՝ ֆիզիկական թերությունների, հիվանդություն ունենալու կամ անգրագետ լինելու հանգամանքների հետ, հակառակ պարագայում օրենսդիրը, բավարարվելով սույն պարտադիր պայմանն արդեն իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված լինելու հանգամանքով, ավելորդ անգամ այն որպես ինքնուրույն դեպք չէր նախատեսի նույն հոդվածի մեկ այլ՝ 4-րդ կետի երկրորդ նախադասությամբ:

Դրանից ելնելով՝ գտնում ենք, որ վերը նշված երրորդ դեպքն իր մեջ կարող է ներառել նաև այնպիսի իրավիճակները, երբ կտակարարն ի վիճակի չէ անձամբ կարդալ կտակը փաստաթղթի լեզվին բավարար չափով չտիրապետելու պատճառաբանությամբ, որը պայմանավորված չէ ինչպես ֆիզիկական թերություններ, հիվանդություն ունենալու, այնպես էլ անգրագետ լինելու հանգամանքով:

Ընդ որում, վերը նշված բոլոր երեք դեպքերում կտակը պետք է ստորագրի նաև վկան:

Միևնույն ժամանակ ցանկանում ենք նշել, որ հենց ինքը՝ օրենսդիրը, չի բացառել այնպիսի իրավիճակները, երբ վերը նշված նոտարական գործողությունը պետք է կատարվի միաժամանակ թարգմանչի և վկայի ներկայությամբ՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանելով, որ վկաների ներկայությամբ կատարված գործարքն ստորագրում են վկաները, իսկ թարգմանչի մասնակցությամբ՝ **նաև թարգմանիչը**:

Վերոգրյալի հիման վրա՝ հայտնում ենք մեր անհամաձայնությունը Վճռաբեկ դատարանի այն դիրքորոշման վերաբերյալ, որ ի տարբերություն անգրագիտության դեպքի՝ **կտակարարի՝ փաստաթղթի լեզվին բավարար չափով ծանոթ չլինելու (հայերենին չտիրապետելու) դեպքում օրենքը չի նախատեսում նոտարի կողմից կտակը վավերացնելու գործողությանը վկայի ներկայության պարտադիր պահանջ՝** չսահմանափակելով կողմերի ցանկությամբ վկայի մասնակցության հնարավորությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հայտնում ենք մեր անհամաձայնությունը Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշման վերաբերյալ:

Դատավորներ՝

Գ. ՀԱԿՈՒՅԱՆ

Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

(1) «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 7-րդ մասի գործող խմբագրության համաձայն՝ անձը, որը չի տիրապետում հայերենին, կարող է նոտարական գործողություններին մասնակցել թարգմանչի միջոցով: Եթե նոտարը տիրապետում է անձին հայտնի օտար լեզվին, ապա փաստաթուղթը բանավոր կարող է թարգմանվել նոտարի կողմից, եթե նոտարական գործողություններին մասնակցող անձը չի առարկում և չի ցանկանում մասնակցել իր թարգմանչի միջոցով, որի մասին նշում է կատարվում վավերացման մակագրությունում:

